Հաստատված է
«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2024 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ, արձանագրություն №01-07/24:
Գիտական խորհրդի նախագահ,
ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար

Մ. Գ. Բարսեղյան

ԿԱՐԳ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կարգի նպատակն է սահմանել Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում (այսուհետ՝ ՃՇՀԱՀ) մասնագիտական կրթական ծրագրերի (այսուհետ՝ ՄԿԾ) ներքին աուդիտ իրականացնելու գործընթացը:
1.2 Սույն կարգը տարածվում է ՃՇՀԱՀ-ի կողմից իրականացվող բոլոր ՄԿԾ-ների վրա:
1.3 ՄԿԾ-ի ներքին աուդիտը համակարգված և պարբերաբար կրկնվող գործընթաց է, որը միտված է բացահայտելու ՄԿԾ-ի համապատասխանությունը համալսարանի առաքելությանը, Հայաստանի Հանրապետությունում գործող որակավորումների ազգային շրջանակի և/կամ որակավորումների ոլորտային շրջանակի (այսուհետ՝ ՈԱՇ/ՈՈՇ) և այլ իրավական ակտերի և աշխատաշուկայի պահանջներին:
1.4 ՄԿԾ-ի ներքին աուդիտի գործընթացում ներգրավվում են ներքին և արտաքին շահագրգիռ կողմերի ներկայացուցիչները (ուսանողներ, դասախոսներ, գործատուներ, ոլորտի առաջատար մասնագետներ, փորձագետներ և այլ):
1.5 ՄԿԾ-ի ներքին աուդիտը իրականացվում է հետևյալ չափանիշներով.

Չափանիշ 1. Մասնագիտության կրթական ծրագիրը
Չափանիշ 2. Դասախոսական կազմը
Չափանիշ 3. Դասավանդումը և ուսումնառությունը
Չափանիշ 4. Ուսանողների գիտելիքների և կարողությունների գնահատումը
Չափանիշ 5. Հետազոտական և ստեղծագործական գործունեությունը
Չափանիշ 6. Կրթական միջավայրը
Չափանիշ 7. Որակի ապահովումը

II.ՄԿԾ-Ի ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

2.1 ՄԿԾ-ի ներքին աուդիտի գործընթացը իրականացնելու նպատակով ՃՇՀԱՀ-ի ռեկտորի հրամանով ձևավորվում է ՄԿԾ-ի ներքին աուդիտի հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) հետևյալ կազմով.

- ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր (Հանձնաժողովի նախագահ),
- կրթության վարչության ղեկավար/աշխատակից,
- կրթության որակի ապահովման և զարգացման կենտրոնի ղեկավար/աշխատակից,
- առնվազն 2 ուսանող,
- արտաքին փորձագետ (առնվազն 1 մասնագետ) (տեղական և/կամ օտարերկրյա բուհի աշխատակից, ոլորտի առաջատար մասնագետ, գործատուների ներկայացուցիչ):

2.2 ՄԿԾ-ի ներքին աուդիտի ընթացքում ՃՇՀԱՀ-ի համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցները Հանձնաժողովի պահանջով և նշված ժամկետներում պարտավոր են տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն:

2.3 ՄԿԾ-ի ներքին աուդիտի գործընթացի կազմակերպումը իրականացվում է հետևյալ փուլերով.

- ՄԿԾ-ի ներքին աուդիտի Հանձնաժողովի ձևավորում և հաստատում ռեկտորի հրամանով.
- ՄԿԾ-ի ներքին աուդիտի գործընթացի ժամանակացույցի (Հավելված 1) մշակում և ներկայացում ռեկտորի հաստատմանը.
- Հանձնաժողովի կողմից ՄԿԾ-ի ներքին աուդիտի համար տեղեկատվության հավաքագրում.
- ՄԿԾ-ում ներգրավված ներքին շահակիցների (ուսանողների, դասախոսների) հետ խորքային հարցազրույցների իրականացում.
- Հանձնաժողովի հաշվետվության (Հավելված 2) կազմում.
- ՄԿԾ-ի ներքին աուդիտի արդյունքների վերաբերյալ ՃՇՀԱՀ-ի ռեկտորատի նիստին ներկայացում.
- ՄԿԾ-ի ներքին աուդիտի արդյունքում վերհանված թերությունների վերացման գործողությունների ծրագրի մշակում և հաստատում ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում:

2.4Հանձնաժողովը եռօրյա ժամկետում կազմում է ՄԿԾ-ի ներքին աուդիտի իրականացման ժամանակացույց՝ սահմանելով կետ 2.3-ում նշված յուրաքանչյուր փուլի համար հստակ ժամկետներ:

III.ՄԿԾ-Ի ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ և ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Չափանիշ 1. Մասնագիտության կրթական ծրագիրը

Մասնագիտության կրթական ծրագիրը (այսուհետ՝ ՄԿԾ) համապատասխանում է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի, որակավորման բնութագրի պահանջներին, ինչպես նաև բուհի առաքելությանը:

Հհ	Չափորոշիչ	Չափորոշչի միավորային արժեքը	Հատկացվող միավորը	Հիմնավորում[1]
ա	ՄԿԾ-ի նպատակները և խնդիրները համահունչ են ուսումնական հաստատության առաքելությանը և նպատակներին	1		
բ	ՄԿԾ-ն հանդիսանում է բուհի պլանավորման և ռեսուրսների բաշխման մաս	1		
գ	ՄԿԾ-ն մանրամասն նկարագրված է ըստ շնորհվող որակավորման ուսումնառության ակնկալվող արդյունքների	1		
դ	ՄԿԾ-ն համապատասխանում է ՈԱՇ-ին, մասնագիտական կրթության որակավորումների բնութագրին	1		
ե	ՄԿԾ-ն բովանդակային առումով հստակ մշակված է և համահունչ է նմանատիպ այլ ճանաչված մասնագիտության կրթական ծրագրի հետ և նպաստում է ուսանողների ու դասախոսական կազմի շարժունությանը և միջազգայնացմանը	1		
զ	ՄԿԾ-ի ուսումնառության ակնկալվող արդյունքները բավարարում են ուսանողների և այլ շահակիցների կարիքները	1		
է	Առկա են հստակ ընթացակարգեր ու մեխանիզմներ, որոնք ապահովում են ՄԿԾ-ի մշակման, հաստատման, մշտադիտարկման, գնահատման և	1		

[1] Հիմնավորումը պետք է ներառի յուրաքանչյուր չափորոշչի համար ներկայացված հիմքերի (փաստաթղթեր, հաշվետվություններ, փաստեր և այլ) հղումները:

	բարելավման իրականացումը			
	Ընդամենը	7		

Չափանիշ 2. Դասախոսական կազմ

ՄԿԾ-ն ապահովված է մասնագիտական անհրաժեշտ որակավորումներ ունեցող դասախոսական կազմով՝ ՄԿԾ-ի նպատակներն իրականացնելու համար:

Հհ	Չափորոշիչ	Չափորոշչի միավորային արժեքը	Հատկացվող միավորը	Հիմնավորում[1]
ա	ՄԿԾ-ի համար սահմանված են դասախոսական կազմի մասնագիտական որակավորումներին ներկայացվող հստակ պահանջներ և դասախոսական կազմի հավաքագրման քաղաքականություն և ընթացակարգեր	1		
բ	ՄԿԾ-ի շրջանակներում սահմանվել են դասախոսական կազմի պարբերաբար գնահատման հստակ քաղաքականություն ու ընթացակարգեր, որոնք նպաստում են դասախոսների մասնագիտական կարիքների վերհանմանը և զարգացմանը	1		
գ	ՄԿԾ-ն նպաստում է դասախոսական կազմի կայացմանը և մասնագիտական առաջընթացին	1		
դ	Հիմնական դասախոսական կազմն ապահովում է ՄԿԾ-ի կայուն իրականացումը	1		
	Ընդամենը	4		

Չափանիշ 3. Դասավանդումը և ուսումնառությունը

ՄԿԾ-ի շրջանակում կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդներն ապահովում են ուսանողների մոտ ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերումը:

Հհ	Չափորոշիչ	Չափորոշչի միավորային արժեքը	Հատկացվող միավորը	Հիմնավորում[1]
ա	ՄԿԾ-ի շրջանակում հստակ սահմանված են դասավանդման և ուսումնառության մոտեցումները, մեթոդները, որոնք անհրաժեշտ են ուսումնառության ակնկալվող արդյունքները ձևավորելու համար	1		
բ	ՄԿԾ-ն իրականացվում է՝ հաշվի առնելով միջազգային մակարդակում կիրառվող դասավանդման առաջավոր փորձը և մոտեցումները	1		
գ	Առկա են դասավանդման և ուսումնառության գործընթացների գնահատման և բարելավման մեխանիզմներ	1		
	Ընդամենը	3		

Չափանիշ 4. Ուսանողների գնահատումը

ՄԿԾ-ն ունի ակադեմիական ազնվությանը նպաստող գնահատման համակարգ, ինչը թույլ է տալիս հավաստել ուսանողի առաջընթացը և ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը և ձեռքբերումը:

Հհ	Չափորոշիչ	Չափորոշչի միավորային արժեքը	Հատկացվող միավորը	Հիմնավորում[1]
ա	ՄԿԾ-ի շրջանակներում կիրառվում է ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը գնահատող հստակ և հուսալի համակարգ, որի չափանիշները հասանելի են դասախոսներին և ուսանողներին	1		
բ	ՄԿԾ-ի շրջանակներում առկա են որակավորումների շնորհման նպատակով ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերումը հավաստող հստակ	1		

	մեխանիզմներ			
գ	ՄԿԾ-ի շրջանակներում առկա են գնահատման համակարգի բարելավման հստակ մեխանիզմներ	1		
դ	ՄԿԾ-ի շրջանակներում հավասար և անաչառ մոտեցում է ցուցաբերվում ուսանողներին հստակ սահմանած քաղաքականության և ընթացակարգերի միջոցով՝ հաշվի առնելով նրանց պարտականությունները և բողոքները	1		
ե	ՄԿԾ-ի շրջանակներում խրախուսվում է ուսանողի ուսումնագիտական ինքնուրույնությունը և պայքարը գրագողության դեմ	1		
	Ընդամենը	5		

Չափանիշ 5. Հետազոտական և ստեղծագործական գործունեությունը

ՄԿԾ-ի շրջանակում ապահովվում է կապը հետազոտական ու ստեղծագործական գործունեության և ուսումնառության միջև:

Հհ	Չափորոշիչ	Չափորոշչի միավորային արժեքը	Հատկացվող միավորը	Հիմնավորում[1]
ա	ՄԿԾ-ի շրջանակում առկա են երկարաժամկետ ռազմավարություն, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտական ոլորտում բուհի հետաքրքրությունները և հավակնությունները	1		
բ	ՄԿԾ-ն հստակ քաղաքականության ու ընթացակարգերի միջոցով նպաստում է հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին	1		
գ	ՄԿԾ-ի շրջանակում կարևորվում է հետազոտական գործունեության միջազգայնացումը	1		
դ	ՄԿԾ-ի շրջանակում առկա են հետազոտական ու	1		

	ստեղծագործական գործունեությունը և ուսումնական գործընթացը փոխկապակցելու և բարելավելու հստակ մեխանիզմներ			
	Ընդամենը	4		

Չափանիշ 6. Կրթական միջավայրը

ՄԿԾ-ն նպաստում է որակյալ կրթություն իրականացնելուն՝ ձևավորելով ուսումնառության համար բարենպաստ միջավայր:

Հհ	Չափորոշիչ	Չափորոշչի միավորային արժեքը	Հատկացվող միավորը	Հիմնավորում[1]
ա	ՄԿԾ-ի իրականացման համար առկա են անհրաժեշտ ռեսուրսներ, որոնք նպաստում են սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացմանն ու ուսումնական միջավայրի ստեղծմանը	1		
բ	Ուսանողներին տրամադրվում են ծրագրի սահմաններում ուսումնառությանը նպաստող օգտակար ու մատչելի տեղեկատվություն և խորհրդատվություն	1		
գ	ՄԿԾ-ն ապահովված է իր բովանդակությանը համապատասխան ուսումնամեթոդական անհրաժեշտ բազայով	1		
	Ընդամենը	3		

Չափանիշ 7. Որակի ապահովում

ՄԿԾ-ի շրջանակում առկա է որակի ներքին համակարգ, որն ապահովում է ՄԿԾ-ի որակի կայունությունը և շարունակական զարգացումը:

Հհ	Չափորոշիչ	Չափորոշչի միավորային արժեքը	Հատկացվող միավորը	Հիմնավորում[1]
ա	Որակի ապահովման ներքին համակարգը մշակված է և գործում է հասարակության կարիքներին և	1		

	ուսանողների պահանջներին հետևելու, ինչպես նաև իր գործունեությունը գնահատելու համար			
բ	ՄԿԾ-ի շրջանակում առկա են որակի ներքին ապահովման արդյունավետ քաղաքականություն և ընթացակարգ (ընթացակարգեր)	1		
գ	ՄԿԾ-ի շրջանակում հետադարձ կապի մեխանիզմներով հավաքագրվում է իրականացվող գործընթացների մասին հավաստի տեղեկատվություն, որը վերլուծվում է ծրագրի նպատակների և գործընթացների բարելավման համար	1		
դ	ՄԿԾ-ի ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ներքին ապահովման գործընթացներում	1		
ե	ՄԿԾ-ի շրջանակում իրականացվում է օրինակելի փորձի տարածում	1		
	Ընդամենը	5		

IV.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն կարգը հաստատվում, փոփոխվում և լրացվում է համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

4.2 Սույն կարգն ուժի մեջ է մտնում համալսարանի գիտական խորհրդի որոշումը համալսարանի ռեկտորի կողմից հաստատվելուց հետո տասներորդ օրը:

4.3 Այն հարցերը, որոնք ներառված չեն սույն կանոնակարգում, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով և համալսարանի կանոնադրությամբ:

Գիտական քարտուղար Լ.Հ. Լևոնյան

10 հուլիսի, 2024թ.

Գիտական խորհրդի արձանագրություն №01-07/24

Հավելված 1. ՄԿԾ-ի գնահատման գործընթացի իրականացման ժամանակացույցի օրինակ

Հհ	Գործողություն	Ամսաթիվ
1.	ՄԿԾ-ի ներքին աուդիտի գործընթացի ժամանակացույցի մշակում և ներկայացում ռեկտորի հաստատմանը	
2.	ՄԿԾ-ի ներքին աուդիտի Հանձնաժողովի ձևավորում և հաստատում ռեկտորի հրամանով	
3.	Հանձնաժողովի կողմից ՄԿԾ-ի ներքին աուդիտի համար տեղեկատվության հավաքագրում	
4.	ՄԿԾ-ում ներգրավված ներքին շահակիցների (ուսանողների, դասախոսների) հետ խորքային հարցազրույցների իրականացում	
5.	Հանձնաժողովի հաշվետվության կազմում	
6.	ՄԿԾ-ի ներքին աուդիտի արդյունքների վերաբերյալ ՃԾՀԱՀ-ի ռեկտորատի նիստին ներկայացում	
7.	ՄԿԾ-ի ներքին աուդիտի արդյունքում վերհանված թերությունների վերացման գործողությունների ծրագրի մշակում և հաստատում ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում	

Հավելված 2. ՄԿԾ-ի ներքին աուդիտ անցկացնող Հանձնաժողովի հաշվետվության ձևաչափ

1. ՄԿԾ-ի ընդհանուր բնութագիրը:
2. ՄԿԾ-ի գնահատման ամփոփիչ աղյուսակ.

Հ h	Չափանիշ	Չափանիշի միավորային արժեքը	Հատկացված միավորը[2]	Հիմնավորում[3]
1.	Մասնագիտության կրթական ծրագիրը	7		
2.	Դասախոսական կազմը	4		
3.	Դասավանդումը և ուսումնառությունը	3		
4.	Ուսանողների գիտելիքների և կարողությունների գնահատումը	5		
5.	Հետազոտական և տեղծագործական գործունեությունը	4		
6.	Կրթական միջավայրը	3		
7.	Որակի ապահովումը	5		
	Եզրափակիչ գնահատականը	31 (100%)		

3. Եզրակացությունը տեքստային տեսքով:

Հանձնաժողովի անդամների ստորագրությունները_____

Ամսաթիվ

[2] Հատկացված միավորը հանձնաժողովի առանձին անդամների կողմից տվյալ չափանիշի գնահատման արդյունքում ձևավորված միավորների միջինացված արժեքն է:
[3] Հիմնավորումը պետք է ներառի յուրաքանչյուր չափանիշի համար ներկայացված հիմքերի (փաստաթղթեր, հաշվետվություններ, փաստեր և այլ) հղումները: